«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հայ ժողովուրդն Արցախյան հերոսամարտի ժամանակ
ԱՌԱՐԿԱ	ՆԶՊ
ՀԵՂԻՆԱԿ	Վարդանյան Գագիկ
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Քաղսիի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....,.....3
Գլուխ 1. Հայրենասիրական դաստիարակությունը. 4
Գլուխ 2 Արցախյան առաջին պատերազմը 9
Եզրակացություններ.....17
Գրականության ցանկ.....18

Ներածություն

Ռազմական գործը և զինվորական պատրաստությունը մարդկության պատմության ձևավորման հետ միասին սկսել է գոյություն ունենալ, իսկ «Նախնական զինվորական պատրաստություն»-ը, որպես առարկա մեր իրականաության մեջ կյանքի է կոչվել 20-րդ դարի սկզբներին: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան հնարավորություն է տալիս ձևավորելու մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:Աշխատանքի թեման է՝ Հայ ժողովուրդ Արցախյան ազատամարտի ժամանակ:

Դասի նպատակը՝

ա) արցախյան ազատամարտի թեմաներով աշակերտների ձեռք բերած գիտելիքների համակարգում,

բ) թեմայի ընձեռած հնարավորությունների սահմանում աշակերտի տրամաբանական, վերլուծական, հետազոտական, համագործակցային և ստեղծագործական կարողությունների ու հմտությունների զարգացում,

գ) արցախյան ազատամարտին վերաբերող թեմայի ուսուցում՝ ի նպաստ աշակերտի ռազմահայրենասիրական դաստիարակության:

Դասի հիմնական խնդիրներն են

- տարբեր արդյունավետ միջոցներով սովորողների մոտ ձևավորել նվիրվածություն, հայրենասիրություն սովորողների մոտ հետաքրքրություն առաջացնել մեր պատմական հերոսական անցյալի և նորօրյա հերոսների, սխրագործությունների ու հայրենասիրության մասին:
- պարզել, թե սովորողը ինչ է հասկանում հայրենասիրություն ասելով:
- բացահայտել այն պատճառները, դաստիարակության ներգործությունները, որոնք սովորողների մոտ ձևավորում են հայրենասիրություն:

Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականություն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում է ինքնառեալիզացման ակտիվ գործընթացում ի շահ հայրենիքի բարօրության:

Գլուխ 1. Հայրենասիրական դաստիարակությունը

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պարտրիոտ» բառից, նշանակում է հայրենիքը սիրող: Երբ ասում ենք հայրենիք, առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը: Ցիցերոնը ասում էր «մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ «Հայրենիք»[1]:

«Հայրենիքը միայն այն վայրը չէ, ուր մենք ծնվել ենք: Այն մեր երկիրն է: Պատահական չէ, որ մեր գիտակցության մեջ երկու բառեր միշտ իրար կողքի են՝ մայր հայրենիք»[2]:

Այսօր արժեզրկվում են բարոյական մի շարք որակներ: Ժամանակակից գլոբալացման պայմաններում, երբ տեղի են ունենում ոչ միայն մշակույթների ներթափանցում, ինտեգրում, այլև բացասական դրսևորումների ներթափանցում, «երբ մեր օրերի հայ իրականությունում զգալիորեն առկա է օտարամոլություն ու հայրենասիրության արժեզրկում կամ նվազում», կարևոր է դառնում բարոյական արժեքներից հատկապես հայրենասիրության դաստիարակությունը:[3]

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

---

[1] Ամիրջանյան Ա. Յու., Սահակյան, Ա. Ս., Մանկավարժություն, «Մանկավարժ» 2005, էջ 348:

[2] Առաքելյան Ս., Դպրոցականների հայրենասիրական դաստիարակություն իրականացնող ուսուցիչների նախապատրաստման գիտատեսական հիմքերը, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2015, էջ 10:

[3] Դավթյան Ն. Սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2015, էջ 47:

Հետևապես, ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որոնք մեր ինքնատիպությունն են համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Հայեցի դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներ չյուրացրած հայը չի կարող իր ազգի լիարժեք անդամը լինել: Ահա թե ինչու հայ դպրոցի, առհասարակ, հայեցի դաստիարակության կարևորագույն խնդիրն է ապահովել ազգայինի և համամարդկայինի միաձուլումը:

Մենք՝ ուսուցիչներս, պարտավոր ենք սերմանել սեր հայրենիքի, պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ: Սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր են խաղում ուսումնական առարկաները, անշուշտ, անհրաժեշտ է շեշտել հայոց պատմության առաջնային դերն ու նշանակությունը: Սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևորագույն դեր կարող են խաղալ մեր մեծ հայրենասերների, ֆիդայիների, ազգային հերոսների, Ղարաբաղյան պատերազմում անմահացած հերոսների հավերժացող օրինակները: Ուսուցիչը պետք է խոսի նաև այսօրվա հերոսների մասին, այն ողողելով հիացմունքի ու հպարտության զգացումներով: Հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում կարևոր դեր կարող են խաղալ մեր պետության խորհրդաննշանները՝ դրոշը, զինանշանը, օրհներգը և դրանց պատմության համակողմանի ուսումնասիրությունը:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, հասարակական հարաբերություններում և դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ: Դրանք ստանում են գաղափարական հիմնավորում և մարդը սովորում է, թե ինչպես պետք է ապրի ու վարվի, որ պատշաճ ու հարիր լինի այն հասարակության ընդունած ու գործող նորմերին, որում ապրում է:

Դաստիարակության կարևոր կողմերից է ազգային ինքնագիտակցության, ազգային պատկանելության խնդիրը, և հարկ է սովորողի գիտակցությանը հասցնել հայրենասերի բարձր կոչումը, հայրենիքի վեհ գաղափարը և նախնիների փառավոր անցյալը, և ավելորդ չէ մեկ անգամ ևս փաստել, որ հայի հայրենասիրությունը խարսխված է դարավոր պատմության ակունքներում, նախնիների և նրանց անցած փառավոր ուղու և փորձի, անձնուրացության, անուրանալի կամքի հիման վրա: Ուսուցիչը պետք է աշակերտների մեջ սերմանի այն համոզմունքը, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ,այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը: Այդ առումով կարելի է նշել Նժդեհի հետևյալ միտքը. «Հայաստան աշխարհը հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբենը, Մամիկոնյանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործությունները»[4] :

Պատմության դասերը պետք է ուսանելի դարձնենք հայ երեխաների համար, դրանք պայքարելու և հաղթելու յուրատեսակ դասեր են, որոնք իրենց նորօրյա դրսևորումը ստացան Ապրիլյան պատերազմում: Ինչպես նաև մշտապես տեղի ունեցող դիվերսիաները, լոկալ (տեղային) բախումները, պատերազմական իրավիճակները և մեր երիտասարդների աննախադեպ քաջագործությունները, որոնք հայրենասիրության վկայությունն են: Այս հաղթանակները հերոսության նոր էջեր ավելացրին մեր հնագույն ու հարուստ տարեգրության մեջ: Միանշանակ այս ամենը դրված է դասավանդողի ուսերին, ինչի արդյունքում մենք վաղն էլ կունենաք հայրենասիրության վառ դրսևորումներ:

Սովորողների բարոյական նորմերի, հայրենասիրության ձևավորման արդյունավետությունը ձեռք է բերվում այն ժամանակ, երբ դաստիարակության խոսքային մեթոդները զուգակցվում են տարբեր մեթոդների, գործունեության տարբեր ձևերի հետ, և աշակերտը այդ գիտելիքները դրսևորում է իր վարքում, գործողություններում և դառնում է դրա կրողը[5]:

---

[4] Ղազարոսյան Ա., Սովորողների հայրենասիրության դաստիարակության ուղիները , «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2015, էջ 34:

[5] Ասատրյան Լ. , Մանկավարժություն (ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի համար) Երևան 2017 էջ 120:

Հայրենասիրական դաստիարակությունը հանդիսանում է կրթական համակարգի առաջնային ուղղություններից մեկը, քանի որ նպաստում է հայրենասիրական վեհ գաղափարի ձևավորմանը, քաղաքական պարտքի կատարման պատրաստակամությանը, հայրենիքի պաշտպանության կարևոր սահմանադրական պարտականությունների կատարմանը:

Հայրենասիրությունը հասարակական և պետական կառույցի, մարդու և հասարակության կենսունակության գաղափարախոսական հիմքն է: Աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունն ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու, հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար:

Այս հարցն էլ ավելի սուր է դրսևորվում մեր օրերում, քանզի այսօր ակներև է ավանդական հայրենասիրության գիտակցության մակարդակի նվազումը, որը պայմանավորված է գլոբալացումով, երբ տեղի են ունենում ոչ միայն մշակույթների ներթափանցում, ինտեգրում, այլև բացասական դրսևորումների ներթափանցում: Այսօր, ավելի քանի երբևէ, կարևոր է դարձել հայրենասիրության դաստիարակությունը, որը պատմության դասավանդման հիմնախնդիրներից կարևորագույնն է:

Այնուհանդերձ ազգային դաստիարակության՝ բազմամշակութային դաստիարակությանը զուգորդման սկզբունքի համաձայն՝ անձի զարգացման և դաստիարակության գործում պետք է հիմնվել ազգային դաստիարակության համակարգի, ազգային ինքնագիտակցության ձևավորման, մշակութային ինքնության, ազգային դիմագծի, հոգեկերտվածքի, մենթալիտետի, ոգու, նկարագրի, ազգային հիշողության պահպանման գաղափարական հիմնադրույթների վրա: Այնուհանդերձ գլոբալացման անշրջելի գործընթացների, տեխնոլոգիական հեղաշրջումների, ժողովրդագրական տեղաշարժերի, միջմշակութային երկխոսության արդի ժամանակաշրջանի գերակայություններից են ազգային կամ մշակութահարմար դաստիարակության՝ բազմամշակութային դաստիարակությանը զուգորդման հրամայականը, այլ ազգերի ու ժողովուրդների մշակույթի,

մենթալիտետի, հոգեկերտվածքի, հաղորդակցման միջոցների առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվության տիրապետումը, դրանց նկատմամբ հարգանքի ու հանդուրժողականության ձևավորումը՝ որպես բազմամշակութային աշխարհում համակեցության, խաղաղության և համերաշխության կարևոր պայման: Ընդհանրապես, իրական կամ ճիշտ ըմբռնված ազգայինը իրական և ճիշտ ըմբռնված համամարդկայինի մասն է:[6]

[6] Թովմասյան Ա., Ազգային դաստիարակության տեղն եւ դերը համամարդկային դաստիարակության համակարդում, էջ 216:

Գլուխ 2 Արցախյան առաջին պատերազմը

Ներածական դասի սկզբնական հատվածում մտագրոհ մեթոդի միջոցով վեր ենք հանում երեխաների ունեցած գիտելիքները, քանզի թեման երեխաներին ծանոթ է: Հաշվի առնելով, որ երեխաները հայոց պատմությունից ուսումնասիրել են պատմական հիմնական դրվագները, պատմական անցքերը, թեման ուսումնասիրել են նաև հասարակագիտություն առարկայից իրավական տեսանկյունից, նախընտրելի ենք համարում Արցախյան պատերազմը ներկայացնել մարտավարության կազմակերպման տեսանկյունից: Այնուհանդերձ նախ դասախոսության միջոցով փուլ առ փուլ ներկայացնում ենք պատերազմի ընթացքը:

Պատերազմը մեկնարկել է 1991 թ. հոկտեմբեր ամսին, այն պաշտոնապես ավարտվել է 1994 թ. մայիսի 12-ին: Արցախյան առաջին պատերազմում գրանցվել է պատմական, դարակազմիկ հաղթանակներ, հաջողվել է ազատագրել պատմական Ղարաբաղի տարածքների մի մասը: Այնուհետև ներկայացնում ենքէ պատերազմի ընթքացքը ըստ ընդունված փուլաբաժանման՝

Առաջին փուլ՝ 1991 թ. - 1992 թ. Հունիս Չեզոքացվեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առկա բոլոր ադրբեջանական հենակետերը, մայիսի 8-9-ը ազատագրվեց Շուշին, իսկ մայիսի 18-ին՝ Բերձորը: Արցախի Հանրապետությունը ճեղքեց շրջափակումը և վերականգնեց ցամաքային կապը ՀՀ-ի հետ:

Երկրորդ փուլ՝ 1992 թ. հունիս - 1993 թ. Հունվար Ադրբեջանին հաջողվեց գրավել Շահումյանի շրջանն ամբողջությամբ և Մարտակերտի շրջանի մեծ մասը՝ փաստորեն օկուպացնելով Արցախի Հանրապետության տարածքի մոտ կեսը: Արցախի ինքնապաշտպանության ուժերն անցան Արցախյան հիմնախնդիրը և ԱՀ արտաքին քաղաքականությանը պաշտպանական մարտերի՝ թույլ չտալով Ադրբեջանին զարգացնել իր ագրեսիան[7]:

Երրորդ փուլ՝ 1993 թ. հունվար – 1994 թ. Մայիս Արցախի պաշտպանության բանակը հակահարձակման անցավ: Արդյունքում ազատագրվեց Մարտակերտի շրջանի բռնազավթված հատվածի մեծ մասը (բացառությամբ Լենինավանի, Չայլուի և մի շարք այլ հատվածների), պատմական Ղարաբաղի մի շարք տարածքներ՝

---

[7] Բալայան Ս., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան 2002թ, էջ 355:

Քաշաթաղ, Քարվաճառ, Ջրական, մերձարաքսյան շրջաններ, Տիգրանակերտ և այլն: Արցախի Հանրապետությունը մոտ 350 կմ (Մռավի լեռնաշղթայից մինչև Արաքս) ընդհանուր սահման ունեցավ Հայաստանի Հանրապետության հետ և մոտ 125 կմ սահման՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ:

Պատերազմի ընթացքում հայկական կողմն ունեցավ շուրջ 6000 զոհ: Մոտ 60 հազար հայ դարձավ փախստական կամ տեղահանվեց: Ադրբեջանի կորուստները մի քանի անգամ ավելի էին[8]:

ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԿԱՄ «ՀԱՐՍԱՆԻՔԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ»

Դասի ընթացքում առանձնակի կարևորությամբ ներկայացնում ենք Շուշիի ազատագրումը, մարտավարությունը, Շուշիի ազատագրման պլանը: Բերդաքաղաք Շուշին երկար դարեր եղել է Արցախ աշխարհի սիրտը:

Շուշիի ազատագրման պլանը 1992 թ-ի մարտ-ապրիլ ամիսներին խիստ գաղտնիության պայմաններում կազմել են ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանի, Ֆելիքս Գզողյանի, Սերժ Սարգսյանի, Վազգեն Սարգսյանի, Գուրգեն Դալիբալթայանի, Լեոնիդ Մարտիրոսովի և այլոց գործուն մասնակցությամբ: Այն կազմվել է հետախուզական խմբերի կողմից հակառակորդի ուժերի տեղակայումը, դիրքերն ու քանակական տվյալները վերջնականորեն ճշգրտելուց հետո: Ըստ հետախուզության տվյալների՝ Շուշիում և նրա պաշտպանական թևերում կենտրոնացած էր հակառակորդի մոտ 2500 զինվոր: Այնինչ 40 կմ երկարությամբ

8. Բաբայան Դ. Կ, Արցախյան հիմնախնդիրը և արցախի հանրապետության արտաքին քաղաքականությունը: Փաստեր, ու խորհուրդներ առանց քային գաղափարների և բանալի հասկացությունների վերաբերյալ /Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն.- Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2022.- էջ 71:

ճակատում մենք ունեցել են ընդամենը 3500 կամավորական, և դա այն պարագայում, երբ հարձակվող կողմը պաշտպանվող կողմից պետք է ունենա նվազագույնը 3 անգամ շատ անձնակազմ:

Ապրիլի 28-ին արդեն վերջնականապես որոշվել, ճշգրտվել է հարձակման գլխավոր ուղղությունները, հրամանատարները, առկա զենք ու զինամթերքի քանակը, պատրաստվել էր մարտական հրամանը, որը պարունակում էր հետևյալ մանրամասները.

1. Հակառակորդը շրջանաձև դիրքեր է գրավում Շուշիի բարձունքներում՝ մոտ 1200 մարդ կենդանի ուժով, Զառսլու գյուղում՝ մոտ 100 մարդ, Լիսագորում՝ մոտ 300-350 մարդ, Քյոսալարի ուղղությամբ՝ մոտ 300 մարդ:

Հրամանատաների կեղմից ձևակերպվել է մեր խնդիրը՝

1, ջախջախել հակառակորդին Լիսագոր, Զառսլու, Ջանհասան, Կարագյավ բնակավայրերում,

2, ջախջախել հակառակորդին Շուշիի մատույցներում և այն ազատագրել կանաչներից (այս պայմանական անվանումն է տրվել հակառակորդին), հետագայում հարձակվել Բերդաձորի ուղղությամբ և Բերդաձորի ենթաշրջանն ազատագրել կանաչներից:

Հակառակորդին ջախջախելու միջոցները՝ գրավել բարձունքը և դիրքավորվել այնտեղ: Ուժերի վերախմբավորումից հետո՝ նույն ժամանակում, սկսել հարձակումը Լիսագորի ու Զառսլուի վրա և հարձակման անցնել Շոշի (արևելյան), «26-ի» (հյուսիսային), Լաչինի (հարավային) և Քյոսալարի (հյուսիսարևմտյան) ուղղություններով: Ստեփանակերտի կողմից հակառակորդին ջախջախել բարձունքներում, դիրքավորվել Շուշիի 3 ծայրամասերում, ապա ոչնչացնել թշնամուն և ազատագրել Շուշին»: Ըստ այս մարտական հրամանի՝ Շոշի կամ արևելյան ուղղության հրամանատար է նշանակվել Արկադի Հակոբ Կարապետյանը, «26-ի» կամ հյուսիսային ուղղության հրամանատար՝ Վալերի Չիթչյանը, Լաչինի կամ հարավային ուղղության հրամանատար՝ Սամվել Բաբայանը, Քյոսալարի կամ հյուսիսարևմտյան ուղղության հրամանատար՝ Սեյրան Օհանյանը: Կազմավորվել էին նաև պահեստային ուժեր, որոնք անհրաժեշտության դեպքում պետք է օգնության հասնեին: Շուշիի ազատագրման մարտական գործողությունը պայմանականորեն կրում էր

«Հարսանիքը լեռներում» ծածկանունը:

Շուշիի ազատագրման գործողության նախապատրաստման շրջանում ահռելի աշխատանք են կատարել ինքնապաշտպանական ուժերի հետախուզական, հրետանային և կապի ստորաբաժանումները, ինչպես նաև բժշկական ծառայությունը: Ճշտվել էին բոլոր նշանակետերի տեղանքները, պարզվել էին Շուշիում գտնվող ադրբեջանցի բոլոր հրամանատարների անունները, նրանց նշանաբառերը, բոլոր զինվորների ցանկը: Լեռնային «հարսանիքի» հրավառությունն էլ ապահովեցին հայ հրետանավորները: Դեռևս ապրիլին Լեոնիդ Մարտիրոսովի ղեկավարությամբ սկսվեցին ինքնապաշտպանական ուժերի հրետանավորների կրակի կառավարման պարապմունքները: *Շուշիի գործողության նախապատրաստման ընթացքում առաջին անգամ ստեղծվեց հրետանու խմբավորում, ընտրվեցին հրետանու կրակադիրքերը, որոշվեց, թե կրակելուց հետո ով ուր պիտի տեղափոխվի:* Կապի կազմակերպման առումով ինքնապաշտպանության ուժերի համար Շուշիի ազատագրումը առաջին դասական գործողությունն էր, որի նախապատրաստությունը տևեց շուրջ մեկ ամիս: Մարտական հրամանից դեռ քսան օր առաջ բերվել են առաջին քսան «Ալինկո» գերկարճալիք կայանքները, որոնք գրոհի նախօրեին բաժանվեցին ջոկատների հրամանատարներին[9]:

«Հարսանիքը լեռներում» գործողության նախապատրաստության կարևորագույն բաղադրիչներից մեկն էլ բուժծառայության հստակ և ժամանակին կազմակերպումն էր: Ինքնապաշտպանության ուժերի ռազմաբժշկական ծառայության հիմնադիր Վալերի Մարությանի նախաձեռնությամբ Սղնախի ու Քարինտակի միջև բացազատվեց դաշտային հոսպիտալ, որը պատրաստվեց ծղոտի խրձերից, իսկ տանիքը ծածկվեց ունեցած երկու վրաններով: Մայիսի 8-ի կեսօրին՝ Շուշիի գրոհից ժամեր անց, հոսպիտալ են բերվել առաջին վիրավորները...

9 Ասլանյան Հ., Մելիքբեկյան Գ,Շուշիի ազատագրումը կամ «Հարսանիք լեռներում», էջ 1, http://www.ysu.am/newspaper/hy/1380605176#.YwJFGHZBzIU

Կարևոր է նաև աշակերտներին ներկայացնել Շուշիի ազատագրման նախապատրաստման շրջանակներում հայերի կողմից միջազգային հանրությանը տեղեկացնելու դիվանագիտական աշխատանքները: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, ԵԱՀԽ-ին և մի շարք երկրների ղեկավարներին հասցեագրված ԼՂՀ ԳԽ փետրվարի 19-ի դիմումով նրանց ուշադրությունն է հրավիրվել Ադրբեջանի կողմից իրականացվող ցեղասպանության վրա՝ մասնավորապես հիշատակելով Մարաղայի եղեռնագործությունը: Մայիսի 1-ին էլ միջազգային հանրությանը հայտարարվել է, որ Ղարաբաղի ժողովուրդը սովահար է, զրկված ջրից, էլեկտրականությունից, դեղորայքից... Եվ չնայած դրան՝ Ադրբեջանն Արցախում շարունակում էր հայաթափման ու հայասպան քաղաքականությունը:

Եվ ահա երկամսյա նախապատրաստական աշխատանքներից հետո ՝ մայիսի 8-ի գիշերը՝ ժամը 2.30-ին, անցնել հարձակման: Ինքնապաշտպանական ուժերի հրամանատարական գլխավոր կետը Շոշ գյուղից հյուսիս էր՝ 1207 մետր բարձունքի վրա: Ընդհանուր հարձակումը սկսելուց 10 րոպե առաջ կրակ բացեց ՄՄ-21 մարտկոցը: Ապա ինքնապաշտպանական ուժերի 1200 մարտիկներից բաղկացած 4 գրոհային խմբերը միաժամանակ անցել են հարձակման: Առաջին և երկրորդ ուղղությունների զորախմբերին, որոնք համապատասխանաբար ղեկավարում էին Արկադի Կարապետյանը և Վալերի Չիթչյանը, տրվել էր հետևյալ մարտական առաջադրանքը՝ ճանապարհին ոչնչացնել հակառակորդի կրակակետերը, հասնել Շուշիի պարիսպներին, ճեղքել պաշտպանությունը և մտնել քաղաք: Երրորդ ուղղությամբ գործող ուժերը՝ Սամվել Բաբայանի հրամանատարությամբ, պետք է շարժվեին Շուշի-Լաչին մայրուղով՝ Կուբաթլուի շրջանից հակառակորդի հնարավոր թափանցումից ապահովելով Շուշին գրոհող ջոկատների թիկունքը, ինչպես նաև փակելով Լաչին-Շուշի ճանապարհը, ինչը Շուշիում տեղակայված ադրբեջանցիներին կզրկեր Լաչինից և Ձառիստ գյուղից եկող օգնությունից: Ջանհասան Քյոսալար ուղղությամբ հարձակվող ստորաբաժանումներին էլ հիմնական գործողություններից հակառակորդի ուշադրությունը շեղելու առաջադրանք էր տրված: Միաժամանակ ՋանհասանՔյոսալար ուղղության հայ ռազմիկները, հրամանատար Սեյրան Օհանյանի գլխավորությամբ, Շուշիի մերձակայքի բնակավայրերը մեկուսացնելով, պետք է խոչընդոտեին նրանց փոխգործողություններին և հնարավորության դեպքում

ճնշեին նաև Ջանհասան, Քյոսալար, Կարագյավ գյուղերի կրակակետերը: Հրետանային կրակի աջակցությամբ հարձակվելով բոլոր ուղղություններով՝ հայկական ստորաբաժանումները շփոթության մեջ գցեցին ադրբեջանցի զինվորներին, ովքեր խայծը կուլ էին տվել և չէին կռահում հարձակման գլխավոր ուղղությունը: Խուճապն աստիճանաբար ահագնանում էր ադրբեջանցիների շարքերում, ինչը հանգեցնում էր հուսահատման ու բարոյալքման: Նրանք սկսեցին սարսափահար փախչել Շուշիից: Հայկական կողմը, խուսափելով ավելորդ զոհեր տալուց, բացեց Շուշի-Լաչին ճանապարհը և չխոչընդոտեց ադրբեջանցիների փախուստը: Այսպիսով՝ մայիսի 9-ի գիշերը՝ ժամը 4-ին, հակառակորդի վերջին զինվորները լքեցին Շուշին, և առավոտյան հայ զինյալները մուտք գործեցին հայոց հինավուրց բերդաքաղաք[10]:

Ազատագրվեց Շուշին՝ հնամյա, տանջահար ու վիրավոր: Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու ավերված գմբեթին ծածանվեց հայոց եռագույնը, և մոմի բույրը բարձրացավ եկեղեցու պատերն ու կամարներն ի վեր:

Շուշիի ազատագրման մարտերում հայկական կողմն ունեցավ 47 զոհ, հակառակորդը՝ 150-200 սպանված, շուրջ 300 վիրավոր, 13 գերի: Ադրբեջանական բանակը Շուշիում թողել էր հրետանային 6 կայանք, մի քանի հազար հրթիռ ու արկ:

Շուշիի ազատագրմամբ, սակայն, «Հարսանիքը լեռներում» գործողությունը չավարտվեց: Դրան հաջորդեց Լաչինի մարդասիրական միջանցքի բացման գործողությունը, որով ճեղքվեց ԼՂՀ շրջափակման օղակը, և մայիսի 18ին բացվեց Արցախը Հայաստանին միացնող կյանքի ճանապարհը: Շուշիի ազատագրումը դարձավ մեր հերոսական ազատամարտի հաղթական ավարտի հաղթական մեկնարկը: Լինելով ազատագրական պայքարի առաջին ծաղիկը՝ այն դարձավ նաև

[10] Ասլանյան Հ., Մելիքբեկյան Գ,Շուշիի ազատագրումը կամ «Հարսանիք լեռներում», էջ 1, http://www.ysu.am/newspaper/hy/1380605176#.YwJFGHZBzIU

հետագա հաղթանակների բանալին[11]:

Նյութի ներկայացմանը զուգահեռ կարևոր է համապատասխան քարտեզների և նկարների ցուցադրումը: Դպրոցականներր տարածապատկերային մտածողության, պատկերացումների առաջացման և զարգացման խնդրում շատ մեծ դեր են կատարում պատմական քարտեզները, քարտեզ-սխեմաները, ատլասները, ուրվագծային քարտեզները, որոնց հիմնական նպատակն է՝

- Բացահայտել աշխարհագրական միջավայրը, որտեղ տեղի են ունեցել ուսումնասիրվող փաստերը, որով բացահայտվում է բնության կատարած խոշոր դերը հասարակության կյանքում:
- Բացահայտել պատմական երևույթների տարածքային ընդգրկվածությունն ու տևողությունը, որով պայմաններ են ստեղծվում տնտեսական, քաղաքական, ռազմական ու մշակութային կապերի ու հակասությունների պարզաբանման համար:

Դասի ընթացքում ուսուցչի խոսքը պարտադիր պետք է ուղեկցվի քարտեզի ցուցադրումով, որը նպաստում է սովորողների մոտ ճանաչողական հմտությունների, ինքնուրույն և պատկերային մտածողության զարգացմանը:

Դասավանդման ընթացքում կարևոր կրթադաստիարակչական դեր են կատարում պատմական խոշոր գործիչների դիմանկարների ցուցադրումը, որի հիմնական նպատակն է տեսողության միջոցով որոշակիացնել, ամրապնդել նրանց բնութագիրը: Բարձրդասարանցիների մոտ դիմանկարների ցուցադրումը մեծ դաստիարակչական ազդեցություն է թողնում, այն ստիպում է աշակերտներին իմաստավորել պատմական անհատի անձն ու գործունեությունը:

Զինանշանը

Դասի ժամանակ կարևոր է նաև զինաշնանի նորկայացումը աշակերտնեին և մանրամասն նկարագրությունը:

Պետական զինանշանն ընդունվել է հանրապետության Գերագույն խորհրդի որոշմամբ՝ 1992թ. նոյեմբերի 17-ին: Զինանշանի հեղինակն է Լավրենտ Ղալայանը: Արցախի

[11] Ասլանյան Հ., Մելիքբեկյան Գ,Շուշիի ազատագրումը կամ «Հարսանիք լեռներում», էջ 1, http://www.ysu.am/newspaper/hy/1380605176#.YwJFGHZBzIU

Հանրապետության պետական զինանշանն է՝ թևատարած արծիվ, որի գլխավերևում տարածվում են արևի ճառագայթները, և պատկերված է Արտաշեսյան արքայատոհմի թագը: Կենտրոնում «Մենք ենք մեր սարերը» քանդակի պատկերն է՝ Արցախի Հանրապետության պետական դրոշի և Մեծ Քիրս լեռան ֆոնի վրա: Ներքևի մասում՝ արծվի ճանկերի մեջ, խաղողի վազեր են, թթենու պտուղներ, ցորենի հասկեր: Վերևի կիսաշրջանում հայերեն գրություն է՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն-Արցախ»:

Դասի ժամանակ գրատախտակին ցանկալի է փակցված լինի ժամանակագրական աղյուսակ:

Սեպտեմբերի 2 1991 - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) անկախության հռչակագիրը
Հունվար 21-22 1992 - հայկական զինված խմբավորումները ազատագրեցին Կրկժան գյուղը՝ Ստեփանակերտի մոտ
Փետրվար 25-26 1992 - հայկական կամավորական ջոկատները ազատագրեցին Խոջալուն: Այս գործողության ընթացքում մեծաթիվ զոհեր եղան ադրբեջանական խաղաղ բնակչության շրջանում, ըստ Ադրբեջանական պաշտոնական տվյալների հայկական ռազմական խմբավորումների կողմից դաժանաբար սպանվել է 613 մարդ այդ թվում մեծ քանակությամբ կանայք և երեխաներ (տվյալները ճշտված չեն)
Ապրիլ 10 1992 - ադրբեջանական զինված խմբավորումները գրավեցին Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղը: 45 գյուղացիներ դաժանաբար սպանվեցին, ևս 50-ը գերեվարվեցին, այդ թվում կանայք և երեխաներ:
Մայիս 8 1992 - հայկական զինված խմբավորումները գրավեցին Շուշի քաղաքը, ըստ որոշ տվյալների քաղաքը պաշտպանող ադրբեջանցիների շարքերում էր նաև Շամիլ Բասաևը
Մայիս 18 1992 - հայկական զինված խմբավորումները գրավեցին Բերձոր քաղաքը՝ ճանապարհ բացելով Հայաստանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Հունիս 12 1992 - ադրբեջանական բանակի լայնամասշտաբ հարձական շնորհիվ Շահումյանի շրջանը անցավ վերջիններիս ենթակայության տակ
շարունակելի,,

Եզրակացություններ

Արցախյան առաջին պատերազմը Նորագույն պատմության կարևորագույն դրվագներից է: Արցախյան պատերազմի սխրանքները, հերոսությունները, հաջողությունները մի նոր պայքարի ոգեշնչման աղբյուր են այսօր: Ցանկացած ուսուցչի համար այսօր դժվար է ներկայացնել հերոսական պայքարը, Շուշիի կամ Հադրութի ազատագրումը, սակայն այս հերոսական դրվագներն են, որ այսօր դաստիարակում են անվախ զավակներ, ապագա զինվորներ, քաջ սպաներ, անկոտրուն սերունդ, այն որի կարիքը այսօր առավել քան երբևէ ունի Հայ ժողովուրդը:

Սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևորագույն դեր կարող են խաղալ մեր Ղարաբաղյան պատերազմում անմահացած հերոսների հավերժացող օրինակները: Մշտական զրույցները հերոսների մասին հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում կարևոր դեր են խաղում:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, հասարակական հարաբերություններում և դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ:

Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

Գրականության ցանկ

1, Ամիրջանյան Ա. Յու., Սահակյան, Ա. Ս., Մանկավարժություն, «Մանկավարժ» 2005:

2, Աշիկյան Ա., Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը նոր սերնդի դաստիարակության գործում, Կրթության հիմնահարցերը 21-րդ դարում: 2017, էջ 335-341:

3, Առաքելյան Ս., Դպրոցականների հայրենասիրական դաստիարակություն իրականացնող ուսուցիչների նախապատրաստման գիտատեսական հիմքերը, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, Սիմ տպագրատուն 2015:

4, Ասատրյան Լ. , Մանկավարժություն (ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի համար) Երևան 2017:

5, Ասլանյան Հ., Մելիքբեկյան Գ,Շուշիի ազատագրումը կամ «Հարսանիք լեռներում», էջ 1, http://www.ysu.am/newspaper/hy/1380605176#.YwJFGHZBzIU

6. Ասմարյան Ք., Սիմոնյան Ա., Հայրենասիրությունը՝ որպես բարոյական դաստիարակության նախապայման, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, Սիմ տպագրատուն 2015:

7, Բաբայան Դ. Կ, Արցախյան հիմնախնդիրը և արցախի հանրապետության արտաքին քաղաքականությունը: Փաստեր, ու խորհուրդներ առանց քային գաղափարների և բանալի հասկացությունների վերաբերյալ /Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն.- Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2022: Բալայան Ս., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան 2002թ:

8, Բրուտյան Վ., Հայրենասիրությունը որպես ազգային գաղափարախոսություն, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, Սիմ տպագրատուն 2015:

9. Դավթյան Ն., Սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման ուղիները, Վանաձոր, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Սիմ տպագրատուն 2015:
10. Թովմասյան Ա., Ազգային դաստիարակության տեղն եւ դերը համամարդկային դաստիարակության համակարդում:
11. Ղազարոսյան Ա., Սովորողների հայրենասիրության դաստիարակության ուղիները, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, Սիմ տպագրատուն 2015: